ՆԱԽԱԳԻԾ 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի ..... N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10-րդ բաժնի 06 խմբի 01 դասի <02. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն> ծախսային ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարաններից երեքսենյականոց 6 (3+3) բնակարանները հանձնվում են Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքապետի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանների նվիրատվության պայմանագիր.

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո 1-ամսյա ժամկետում ապահովել պետական սեփականություն հանդիսացող բնակարանների հանձնման-ընդունման գործընթացը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ համաձայն N2 հավելվածի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սահմանել, որ <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 06-րդ բաժնի 01 խմբի 01 դասի <<02. Բնակարանային շինարարություն>> ծախսային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքում կառուցված բնակելի տներից և սույն որոշման 1-ին կետում նշված բնակարաններից՝

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող հաշվառված անձանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բաշխում և հատկացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակավայրերում սահմանված կարգով հաշվառված՝ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բաշխում և հատկացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Հաստատել <Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 06-րդ բաժնի 01 խմբի 01 դասի <02. Բնակարանային շինարարություն> ծախսային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի <Վարպետաց> թաղամասում կառուցված և չբաշխված բնակելի տներից բնակելի տուն ստացող Սպիտակ քաղաքի անօթևան ընտանիքների ցուցակը՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝

1) սույն որոշման 4-րդ կետում նշված ընտանիքների շրջանում բնակելի տների բաշխման գործընթացն իրականացնել վիճակահանությամբ.

2) սույն կետի 1-ին ենթակետի համաձայն բնակելի տների վիճակահանությամբ բաշխման արդյունքներով բնակելի տուն ստացող անձանց և նրանց ընտանիքների անդամների հետ Հայաստանի Հանրապետության անունից կնքել նվիրատվության

(անհատույց մասնավորեցման) պայմանագրեր՝ նշելով, որ բնակարանները (բնակելի տները) ընտանիքի անդամներին հատկացվում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, և պայմանագրերի նոտարական վավերացման ու գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են բնակարանն (բնակելի տունն) ստացող անձի միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մեկամսյա ժամկետում, ելնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համատեղ քննարկման արդյունքներից, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված բնակարանների (բնակելի տների) բաշխման արդյունքներով դրանցից բնակելի տարածություն ստացող անձանց հետ բնակելի տարածության անհատույց օգտագործման պայմանագրերի նոտարական վավերացման ու պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ:

7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված բնակարանների (բնակելի տների) բաշխման արդյունքներով բնակարան (բնակելի տուն) ստացող անձանց և նրանց ընտանիքների անդամների հետ Հայաստանի Հանրապետության անունից կնքել նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրեր՝ նշելով, որ բնակարանները (բնակելի տները) ընտանիքի անդամներին հատկացվում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, և պայմանագրերի նոտարական վավերացման ու գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են բնակարանն (բնակելի տունն) ստացող անձի միջոցների հաշվին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
..... N....- Ն որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարաններից Հայաստանի Հանրապետությանը հանձնվող բնակարանների

h/h	Շենքի հասցեն	Բնակարանի	
		համարը	սենյակների թիվը
1	Դեսին փող. N 45 շենք	բն. N 8	3-սենյակ
2	Դեսին փող. N 45 շենք	բն. N 13	3-սենյակ
3	Դեսին փող. N 47 շենք	բն. N 4	3-սենյակ
4	Դեսին փող. N 47 շենք	բն. N 10	3-սենյակ
5	Դեսին փող. N 47 շենք	բն. N 13	3-սենյակ
6	Պրոմեթևս փող. N 49 շենք	բն. N 2	3-սենյակ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
..... N..- Ն որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան և Սպիտակ քաղաքներում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերից (բնակելի տներից) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բախշման և հատկացման ենթակա բնակարանների (բնակելի տների)

h/h	Հասցե	Բաշխվող բնակարանի (բնակելի տան)	
		համարը	սենյակների թիվը
ք. Ստեփանավան			
1	Դեսին փող. N 45 շենք	բն.N 13	3-սենյակ
2	Դեսին փող. N 47 շենք	բն. N 10	3-սենյակ
3	Դեսին փող. N 47 շենք	բն. N 13	3-սենյակ
ք.Սպիտակ			
1	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 2-րդ փակուղի	բնակելի տուն N4	3-սենյակ
2	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 3-րդ փակուղի	բնակելի տուն N1	3-սենյակ
3	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 3-րդ փակուղի	բնակելի տուն N4	3-սենյակ
4	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 3-րդ փակուղի	բնակելի տուն N7	3-սենյակ
5	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 4-րդ փակուղի	բնակելի տուն N3	3-սենյակ
6	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 6-րդ փակուղի	բնակելի տուն N8	3-սենյակ
7	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 7-րդ փակուղի	բնակելի տուն N6	3-սենյակ
8	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող.	բնակելի տուն N27	3-սենյակ
9	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող.	բնակելի տուն N33	3-սենյակ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
..... N..- Ն որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան և Սպիտակ քաղաքներում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերից (բնակելի տներից) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից բախշման և հատկացման ենթակա բնակարանների (բնակելի տների)

h/h	Հասցե	Բաշխվող բնակարանի	
		համարը	սենյակների թիվը
ք.Ստեփանավան			
1	Դեսին փող. N 45 շենք	բն.N 8	3-սենյակ
2	Դեսին փող. N 47 շենք	բն. N 4	3-սենյակ
3	Պրոմեթևս փող. N 49 շենք	բն. N 2	3-սենյակ
ք.Սպիտակ			
1	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 2-րդ փակուղի	բնակելի տուն N5	3-սենյակ
2	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 3-րդ փակուղի	բնակելի տուն N2	3-սենյակ
3	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող.	բնակելի տուն N31	3-սենյակ
4	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 1-ին փակուղի	բնակելի տուն N7	3-սենյակ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
..... N..- Ն որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքում 2010 թվականին կառուցված և չբաշխված բնակելի տներից բնակելի տուն ստացող Սպիտակ քաղաքի անօթևան ընտանիքների

հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Անձնագիր	Անձերի թիվը	Հատկացվող բնակելի տան սենյակների թիվը
1	Արղամանյան Զորիկ Դավիթի	AF 0323603	4	3-սենյակ
2	Մարկոսյան Լարվենտ Սլավիկի	AF 0712001	4	3-սենյակ
3	Հակոբջանյան Նազելի Էդվարդի	AK 0536544	4	3-սենյակ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

	Իրավական ակտի հիմնավորումը
1.	Անհրաժեշտությունը
	"Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություններին իրավասություն վերապահելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում պետական միջոցների հաշվին 2010 թվականին կառուցված բնակելի տների (բնակարանների) բաշխման արդյունքներով ծագած խնդիրների կարգավորման անհրաժեշտությամբ:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական միջոցների հաշվին 2010 թվականին իրականացված բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցվել և շահագործման են հանձնվել Սպիտակ քաղաքում՝ 220 բնակելի տուն, Ստեփանավան քաղաքում՝ 56 բնակարան (4 բազմաբնակարան շենք): Նշված քաղաքներում սահմանված կարգով հաշվառված, բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով կառուցված բնակելի տներից (բնակարաններից) ծրագրի շահառու հանդիսացող անձանց շրջանում անցկացված վիճակահանության արդյունքներով բաշխվել են՝ Սպիտակ քաղաքում՝ 167 բնակելի տներ և նախատեսվում է բաշխել ևս 22 բնակելի տներ, իսկ Ստեփանավան քաղաքում՝ 45 բնակարաններ: Արդյունքում, չբաշխված 3-սենյականոց բնակելի տների (բնակարանների) թիվը կկազմի՝ Սպիտակ քաղաքում 31 և Ստեփանավան քաղաքում 11: Չբաշխված բնակեկելի տների (բնակարանների) առկայության պայմաններում լուծում են պահանջում հետևյալ խնդիրները՝ -ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն ՀՀ կառավարության 09.06.05թ. N 947-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում հաշվառված զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան, 3-սենյականոց բնակարան ստանալու հավակնող 25 ընտանիքների բնակարանային խնդիրները, որոնցից Սպիտակ քաղաքում և հարակից գյուղերում տարածաշրջանում 3 և Ստեփանավան քաղաքում՝ 2 և հարակից գյուղերում՝ 1

	ընտանիք: -ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն ՀՀ կառավարության 23.07.03թ. N 983-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող հաշվառված, բնակարանի կարիք ունեցող մոտ 300 անձանց բնակարանային խնդիրները: Հարկ է նշել, որ 2010 թվականի պետական բյուջեով առանց ծնողական խնամքի մնացած, բնակարանի կարիք ունեցող երեխաների բնակարանային խնդիրների լուծման համար միջոցներ չեն նախատեսվել: - Սպիտակ քաղաքում միջև երկրաշարժ ծնված, երկրաշարժի հետևանքով ծնողներին կորցրած, սակայն ՀՀ կառավարության 23.07.03թ.N 983-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն չհաշվառված 3 անձանց բնակարանային խնդիրները: Նշված անձինք կազմելով ընտանիքներ բնակվում են վագոն-տնակներում և նրանց 4 անձից բաղկացած անօթևան ընտանիքները հավակնում են 3-սենյականոց բնակելի տուն ստանալուն:
3.	Կարգավորման նպատակը և բնույթը. ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է՝ 1. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում 2010 թվականին կառուցված և դեռևս չբաշխված 3-սենյականոց բնակելի տներից (բնակարաններից)՝ 1) 7 բնակելի տուն (բնակարան)՝ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, բնակելի տների (բնակարանների) հատկացման և բաշխման իրավասությունը վերապահելով ՀՀ պաշտպանության նախարարությանը. 2) 12 բնակելի տուն (բնակարան)՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սահմանված կարգով հաշվառված անձանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով, բնակելի տների (բնակարանների) հատկացման և բաշխման իրավասությունը վերապահելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը. 3) 3 բնակելի տուն՝ Սպիտակ քաղաքում միջև երկրաշարժ ծնված, երկրաշարժի հետևանքով ծնողներին կորցրած, սակայն սահմանված կարգով չհաշվառված անձանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով: 2. Կարգավորել վերը նշված 22 բնակելի տների (բնակարանների) բաշխման արդյունքներով բնակելի տուն (բնակարան) ստացող անձանց հետ համապատասխան պայմանագրերի կնքման և դրանցից բխող իրավունքների գրանցման հետ կապված հարցերը:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների առաջարկությունները:
5.	Ակնկալվող արդյունքը
	Որոշման ընդունմամբ ակնկալվում է լուծել 22 ընտանիքների բնակարանային խնդիրները՝ բնակելի տուն (բնակարան) հատկացնելու միջոցով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

“Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություններին իրավասություն վերապահելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	“Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություններին իրավասություն վերապահելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում:
2	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	“Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություններին իրավասություն վերապահելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը տեղադրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության www.mud.am ինտերնետային կայքում: